ԼՃԱՇԵՆԻ ԴԱՄԲԱՆԱԴԱՇՏԻ ՄՇԱԿՈՒՅԹԸ
(Ք. ա. XXIV–XVIII դդ.)

ԼԵՎՈՆ ՊԵՏՐՈՍՅԱՆ

Հայկական լեռնաշխարհը համաշխարհային քաղաքակրթության, մասնավորապես, Հարավային Կովկասի բազմահարուստ մշակույթում կարևոր տեղ է զբաղեցնում: Այս առումով առանձնանում է Սևանա լճի ավազանի բրոնզեդարյան Լճաշեն հնավայրի շքեղ մշակույթը:

XX դարավերջի տասնամյակների դաշտային աշխատանքների ժամանակ հայտնաբերված մասունքները ոչ միայն ամբողջացնում են Հայաստանի բրոնզեդարյան մշակույթի ուսումնասիրությունը, այլև անառարկելի չափանիշ են Հարավային Կովկասի Ք. ա. IV–II հազարամյակների մշակույթի համար: Սակայն առկա հրապարակումները հիմնականում ուշ բրոնզեդարյան ժամանակաշրջանի մասին են, մինչդեռ վաղ շրջաններին վերաբերողները բավականին քիչ են:

Սույն հրապարակումը վերաբերում է Լճաշենի դամբանադաշտի վաղ կուրգանային և Թռեղք-Վանաձորի շրջափուլին: Այդ ժամանակաշրջանին են վերագրվում Հ. Մնացականյանի պեղած թիվ 14, 42, 44, թիվ 120 (վերին թաղում), 123 դամբանաբլուրներն ու թիվ 62 դամբարանը և մեր 1988 թ.՝ թիվ 55, 1993 թ.՝ Սևան քաղաքում ուսումնասիրած համալիրները:

Լճաշենի դամբանադաշտում ուսումնասիրված նյութերի շարքում առավել սակավ են վաղ բրոնզի և միջին բրոնզի դարաշրջանների միջակայքում գտնվող հուշարձանները: Վաղ բրոնզի ժամանակաշրջանին հաջորդող նյութեր է պարունակում 1988 թ. մեր պեղած թիվ 55 դամբարանը[1]: Գտածոները թե՛ դամբանախցի կառուցվածքով (աղ. I, նկ. 1) և թե՛ սակավաթիվ, սակայն բարձրարժեք նյութերով (աղ. I, նկ. 2-7) վաղ կուրգանային մշակույթի հուշարձան են: Այդ դամբարանը ոչ միայն կառուցվածքով, այլև թաղման ծեսով իր ուրույն տեղն ունի Հայաստանի հիշյալ ժամանակաշրջանի ուսումնասիրության համար: Դամբարանի նյութերն առավել մեծ ընդհանրություններ ունեն նախորդ փուլի նյութերի հետ, որը ևս մեկ անգամ վկայում է վերջիններիս անցումային բնույթը:

Այդ առումով բավական ուշագրավ է 2002 թ. Վրաստանի Տեղոցմինդա գյուղի մոտակայքում պեղված դամբարանը, որը կառուցվածքով և նյութերի տեսականիով համահունչ է Լճաշենի թիվ 55 դամբարանին: Ըստ պեղող հնագետների՝ Տեղոցմինդայի դամբանաբլուրը կառուցվել է այն ժամանակ, երբ վաղ բրոնզի հասարակությունում կատարվում էին ինչպես հասարակական, այնպես էլ մշակութային տեղաշարժեր: Այստեղ հայտնա-

[1] Л. А. Петросян. Раскопки лчашенского Могильника в 1997 г.– Археологическая конференция Кавказа, I. Тбилиси, 1998, с. 99–101.

Աղյուսակ I



բերված նյութերն ունեն ինչպես վաղ բրոնզի, այնպես էլ վաղ կուրգանային մշակույթի վաղ մարդոփյան և ուշ բեղենյան դրսևորումներ[2]:

Այսպես, Լճաշենի թիվ 55 դամբարանում գտնված երկու խեցանոթներից մեկը՝ կարասը (աղ. I, նկ. 2), ձևով և արտաքին սև փայլով գրեթե չի տարբերվում Շենգավիթի հայտնի կարասից[3], իսկ զարդերի կատարմամբ՝ Թռեղքի վաղ խմբի թիվ 27 դամբանաբլրում հայտնաբերվածներից[4]: Մեծափոր իրանով կարասները փոքր-ինչ երկարուկ տեսք ստանալով՝ լայն տարածում են գտնում հաջորդ փուլում:

Երկրորդ խեցանոթն (աղ. I, նկ. 3) իր ձևով և հարդարանքով որոշ ընդհանրություն ունի վաղ բրոնզի խեցեղենի զարդաձևերի հետ, սակայն ասես դրա կրկնօրինակը լինի Իլթոյի Ք. ա. III–II հազարամյակների սահմանագլխին վերագրված անոթը[5]: Այդ կարասը հստակորեն ցույց է տալիս նախորդ՝ վաղ բրոնզի նյութերի հետ կապը, իսկ վերջինում հաջորդ փուլի դրսևորումներն են: Փոքր սափորի վրայի զարդաձևերը սերտորեն առնչվում են Հ. Մնացականյանի պեղած թիվ 123 դամբարանի խեցեղենի զարդամոտիվներին[6]:

Ուսումնասիրվող դամբարանի ուշագրավ նյութերից է նաև որձաքարից պատրաստված թերավարտ գուրզը (աղ. I, նկ. 6), որը կրկնօրինակներ ունի Հայաստանի և Հարավային Կովկասի բազմաթիվ հուշարձաններում (Էլառ, Գառնի, Էջմիածին, Շենգավիթ և այլն)[7]: Հար և նման մի գուրզ էլ հայտնի է Քվեմո Քեղիի ավերված դամբարանից, որտեղի խեցանոթների վրայի զարդերն իրենց կատարմամբ ևս մերձենում են Լճաշենի թիվ 55 դամբարանի նյութերի զարդերին[8]: Վրաստանում նման գուրզեր են հայտնի նաև Թռեղքի թիվ 40 դամբանաբլրից[9]: Ադրբեջանում նման գուրզ է գտնվել Ք. ա. III հազարամյակի վերջով թվագրված թիվ 13 դամբարանում[10]: Ի դեպ, բացի վերը նշված վաղ բրոնզի ժամանակաշրջանի օրինակներից, վերջինները համաժամանակյա են Լճաշենի թիվ 55 դամբարանին:

Մյուսը տափակ թերթաքարից պատրաստված, ստորին աշխատող մասից հարդարված գործիք է (աղ. I, նկ. 7), որի ձևից դատելով կարող ենք ենթադրել, որ ծառայել է որպես քերիչ:

---

[2] Г. М и н д и а ш в и л и. Ранний Курган у с. Тедоцминда.– Археология, Фольклористика Кавказа, Международная научная конференция. Тбилиси, 2004, с. 94–95.

[3] *Ս. Հ. Մ ա ր դ ա ր յ ա ն. Նախնադարյան հասարակությունը Հայաստանում, Երևան, 1967, էջ 29:*

[4] Э. М. Г о г а д з е. Периодизация и генезис курганной культуры Триалети. Тбилиси, 1972, табл. 11, рис. 8.

[5] Ш. Ш. Д е д а б р е ш в и л и. Памятники ранней и средней бронзы.– Труды кахетской археологической экспедиции I. Тбилиси, 1969, с. 62, рис. 151.

[6] *Հ. Հ. Մ ն ա ց ա կ ա ն յ ա ն. Լճաշենի մշակույթի զարգացման հիմնական էտապները.– ՊԲՀ, 1965, №2, աղ. II, նկ. 2, 3, 12–19:*

[7] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Հայկական լեռնաշխարհի մշակույթը մ. թ. ա. III հազարամյակում, Երևան, 1967, աղ. II:*

[8] Ш. Ш. Д е д а б р е ш в и л и, ***Նշվ. աշխ., աղ.*** III:

[9] Б. А. К у ф т и н. Археологические раскопки в Тралети I. Тбилиси, 1941, табл. CXL.

[10] Т. А х у н д о в. Северо-западный Азербайджан в эпоху энеолита и бронзы. Баку, 2001, табл. VI.

Սոցիալական բարձր դիրքի մասին են վկայում սայլի փայտե մասերը և հատկապես ոսկյա թիթեղներից պատրաստված □թագի□ նախատիպը (աղ. I, նկ. 4, 5): Այդ գաղափարին հանգեցրեց երկու մասերի ճիշտ տեղադրումը, ժապավենն (աղ. I, նկ. 4) ընդգրկում էր գանգի ետևի մասը, որի ծայրերն իրար էին մոտեցած ճակատային մասում գտնվող «սկավառակի» (աղ. I, նկ. 5) մոտ: Վերջինիս եզրերին արված փոքր անցքերը վկայում են, որ այն ամրացված է եղել փափուկ հիմքի վրա, որին էլ երկու կողմերից միացվել են ժապավենի ծայրերը: Որպես ժապավենի վաղնջական նմուշ կարող են ծառայել Կվացիելերիի Ք. ա. III հազարամյակի սկզբին վերագրվող C շերտից հայտնաբերված բրոնզե օրինակները[11]: Սկավառակների ձևերը տեսանելի են Թռեղքի վաղ խմբի թիվ 40 դամբարանում, որի վրայի անցքերը ոչ թե եզրերին են արված, այլ դասավորված են ճառագայթաձև ութ շարքով[12]: Առավել ուշագրավ են անատոլիական Մոխրաբլրի՝ Ասորեստանի կողմից գաղութացման ժամանակաշրջանին պատկանող H շերտից հայտնաբերված ոսկյա զուգահեռները, որոնք որպես ճակատակալներ և սկավառակներ[13] նշված են առանձին-առանձին:

Ինչպես արևակերպ ոսկե սկավառակների, այնպես էլ Լճաշենի թիվ 55 դամբարանի ծածկասալերի ճառագայթաձև դասավորությունը հիմք է տալիս ենթադրելու արևի պաշտամունքի հետ դամբանատիրոջ ունեցած աղերսի մասին. հնարավոր է, որ գործ ունենք հնագույն աշխարհիկ և հոգևոր դասի բարձրաստիճան ներկայացուցչի հետ: Ըստ ամենայնի, այդ իրողության ապացույցներ են Քարաշամբի մեծ դամբանաբլրից հայտնաբերված բրոնզե թիթեղների դրվագապատկերները[14]: Բացառված չէ, որ նույն իմաստն է արտահայտում Քարաշամբի նշված դամբանաբլրի անոթներից մեկի ուսերին արված ութաձև ճոխ զարդարուն պատկերը[15]:

Այսպիսով, կասկածից վեր է, որ ուսումնասիրվող դամբարանը պատկանում է վաղ կուրգանային մշակույթին, որը թվագրվում է Ք. ա. XXIV–XXII դարերով:

Թռեղք-վանաձորյան մշակութային փուլի նյութեր պարունակող համալիրները ընդամենը վեցն են՝ 1950–1960-ական թվականներին Հ. Մնացականյանի պեղած թիվ 14, 42, 44, 120 (վերին թաղում), 123 դամբանաբլուրները և թիվ 62 դամբարանը: Դրանցից միայն թիվ 120 և 123 դամբանաբլուրներն ու Լճաշենի ամրոցի տվյալ փուլին պատկանող մշակութային շերտից հայտնաբերված նյութերն են արժանացել ուսումնասիրողների ուշադրությանը: Հարկ է նշել, որ թիվ 14, 42 և 44 դամբանաբլուրներն աչքի չեն զարնում նյութերի բազմազանությամբ: Գերակշիռ մասն են կազմում ձեռքով պատրաստված, դարչնագույն կամ բաց վարդագույն մակերեսով

---

[11] К. Х. Кушнарлва, Т. Н. Чубинишвили. Древние культуры южного Кавказа (V–III тыс. до н. э). Л., 1970, рис. 26.

[12] Б. А. Куфтин. *Նշվ. աշխ., աղ. CXL:*

[13] T.Ozaü c. Kültepe-Kanis II, New Researches at the Trading Center of the Amgient Near Last, Turk Tarih Kurumi Baslmevel Ankara, 1986, pl. 64, 65.

[14] В. Э. Оганесян. Раскопки Карашамбского могильника в 1984 г.— *Հնագիտական աշխատանքները Հայաստանի նորակառույցներում, 1986–1988 թթ. պեղումների արդյունքները, I, Երևան, 1993, աղ. XXIII, 24:*

[15] *Նույն տեղում, աղ. XXV:*

Աղյուսակ II





անզարդ նյութերը (աղ. IV, նկ. 6, 8, աղ. VI, նկ. 1, 3, 5) և կտրելու եղանակով արված զիգզագներով, հորիզոնական գոտիների միջակայքը կարճ գծիկներով, ալիքներով ու երբեմն էլ կետերով լցված զարդամոտիվներով մեծ ու փոքր կճուճները (աղ. IV, նկ. 2, 3, 5, 7, աղ. V, նկ. 3, 4, 9, աղ. VI, նկ. 4): Նմանօրինակ կճուճներ կան նաև թիվ 123 դամբանաբլրի նյութերում (աղ. II, նկ. 3, 4):

Վերոգրյալ նյութերն ամբողջությամբ համապատասխանում են Հարավային Կովկասում մինչ այժմ հայտնի շերտագրական հստակ պատկեր ներկայացնող բնակատեղիի՝ Ուզերլիկ Թեփեի ստորին շերտի նմուշներին, միայն այն տարբերությամբ, որ վերջինիս զարդերն ավելի բազմազան են[16]: Լճաշենի նյութերի նմանակները լավ հայտնի են նաև Սիսիանի թիվ 10 և Մոզի 13 դամբանային համալիրներում[17]:

Ուսումնասիրվող վաղ փուլի անխառն դրսևորումներ են պարունակում նաև Հայաստանի պատմության պետական թանգարանի (ՀՊՊԹ) Մայիսյանի թիվ մեկ (2829/3-17, 123), 2 (2829/18-26, 31-35), 13 (2829/104-121) և Քեթիի թիվ 10-14 դամբարանները[18]:

Զարդամոտիվներով, կատարման եղանակով վկայակոչված նմուշները համապատասխանում են նաև Թռեղքի թիվ 3 դամբանաբլրի նյութերին[19], ինչպես նաև ավելի վաղ ժամանակաշրջանին պատկանող Ցնորիի խմբի թիվ 3 դամբանաբլրի խեցեղենին[20]: Այս կճուճների զարդարուն ու անզարդ նմուշները հայտնի են նաև Հյուսիսարևմտյան Ադրբեջանի Շեքիի Կուդուրլու վայրի Ք. ա. II հազ. սկզբով թվագրվող Դաշյուզի խմբին պատկանող թիվ 3 և 6 դամբանաբլուրներից[21]: Վերը նշվածներից բացի՝ Լճաշենի թիվ 14 դամբանաբլրում գտնվել են նաև մեկ անզարդ և մեկ նույնանման զարդերով, քիչ բարձր նստուկով թասեր (աղ. V, նկ. 5,9): Ակներևաբար, այս անոթների ձևերն ընդօրինակված են Թռեղք-վանաձորյան հուշարձաններում (Թրիալեթի, Կիրովական, Քարաշամբ) հայտնաբերված մետաղե օրինակներից: Հետաքրքրական է, որ Ուզերլիկի միջին շերտից հայտնաբերված կավե օրինակները ոչ միայն նստուկով, այլև ձևով ամբողջությամբ կրկնում են Կիրովականի նմուշը[22]: Լճաշենի օրինակներն ամբողջապես համապատասխանում են Թռեղք-վանաձորյան խմբի վերջին փուլով թվագրվող Նորատուսի թասին[23]:

---

[16] К. Х. К у ш н а р е в а. Новые данные о поселении Узерлик-Тепе около Агдама.– Труды Азербайджанской археологической экспедиции, т. II. Л., 1965, с. 87, рис. 17–20.

[17] O. S. X n k i k y a n. Syunik during the Bronze and Iron Ages. Barrington, 2002, pl. X.

[18] Л. А. П е т р о с я н. Раскопки памятников Кети и Воскеанка (III–I тыс. до н. э.).– Археологические раскопки в Армении № 21. Ереван, 1989, табл. 36–40.

[19] О. М. Д ж а п а р и д з е. Археологические раскопки в Триалети. Тбилиси, 1969, с. 43–44, табл. 23, 24.

[20] Ш. Ш. Д е д а б р е ш в и л и. Курганы алазанской долины.– Труды Кахетской археологической экспедеции II. Тбилиси, 1979, табл VIII, рис. 4.

[21] Т. А х у н д о в. *Նշվ. աշխ., նկ.* XXXVI (8), XLI (1–3)*:*

[22] К. Х. К у ш н а р л в а. *Նշվ. աշխ., էջ 93, նկ. 25:*

[23] А. А. М а р т и р о с я н. Армения в эпоху бронзы и раннего железа. Ереван, 1964, табл. IV.

Աղյուսակ III



Անոթների այս տեսակի սկզբնավորումը նշմարվում է Թռեղքի ծաղկման շրջանի վաղ փուլերի նյութերում, որոնք կան նաև հետագա շրջափուլում:

Մեկ այլ հորինվածքով, պատվանդանաձև նստուկով ուշագրավ գավաթ է հայտնի 1959 թ. Հ. Մնացականյանի պեղած թիվ 44 դամբանաբլրից: Գավաթի մակերեսը սև է, իրանին արված են հատած բրգի տեսք ունեցող 7 ելուստ (աղ. V, նկ. 2): Նմանօրինակ ձևավորմամբ անոթներ մեզ հայտնի չեն: Այն իր ընդհանուր ձևով և հատկապես նստուկի հորինվածքով զգալիորեն մերձենում է Թռեղքի թիվ 5 դամբանաբլրի[24], Քարաշամբի մետաղե օրինակներին[25], որոնք, իրավամբ, համարվում են ծիսական անոթներ:

Կարևոր նյութերով, շքեղությամբ, մետաղե զենքով ու զարդարանքի առարկաներով առավել աչքի են ընկնում Լճաշենի թիվ 120 և 123 դամբանաբլուրները: Թիվ 123-ում գտնված փոքր-ինչ ձգված իրանով հիդրիա հիշեցնող անոթն (աղ. II, նկ. 2) ունի դարչնագույն փայլ և զարդարված է կտրելու եղանակով արված տարատեսակ զարդապատկերներով: Նմանօրինակ ձգված իրանով անզարդ անոթներ են հայտնի թիվ 14 դամբանաբլրում (աղ. V, նկ. 7): Ինչպես հայտնի է, հիդրաները և նման ձգված իրանով անոթները բնորոշ են Թռեղք-վանաձորյան խմբի բոլոր հուշարձաններին: Ուստի և Լճաշենի թիվ 120 և 123 դամբանային նյութերը քննարկվելու են համատեղ: Այդ առումով Քարաշամբի մեծ դամբանաբլուրն առանձնակի կարևորություն ունի ոչ միայն իր նյութերի ընդհանրությամբ, այլև նրանով, որ ինչպես Լճաշենի թիվ 120 դամբանաբլրի վերին, այնպես էլ Քարաշամբի մեծ դամբանաբլրի թաղումները կատարվել են գետնի մակերևույթին՝ քարերի մեկ շարքով առանձնացված հրապարակների վրա[26]: Քարաշամբի գտածոները՝ կարասներն ու կճուճները, ինչպես ձևերով, այնպես էլ ճոխ հարդարանքով ամբողջությամբ համապատասխանում են Լճաշենի նյութերին[27] և Ք. ա. XXII դ. II կեսի – XIX դ. I կեսի նմուշներ են: Լճաշենից հայտնի խնդրո առարկա նյութերը ձևերով ու կիսալուսնաձև զարդի պատկերումով (աղ. II, նկ. 5) համադրվում են նաև Արտաշավանի Ք. ա. XXII–XXI դդ. թվագրված թիվ 5 դամբարանի նյութերի հետ[28]:

Մշակութային պատկանելության առումով ուշագրավ են Լճաշենի թիվ 123 դամբանաբլրի կարասի և կճուճների զարդամոտիվների ընդհանրությունները Թռեղքի «ծաղկման շրջանի» թիվ 8 և 36 դամբանաբլուրների նյութերի հետ[29]:

Դառնալով Լճաշենի թիվ 120 և 123 դամբանաբլուրներից հայտնաբերված փոքր ծավալի անոթներին՝ նշենք, որ դրանք մեծ մասամբ հարթ հատակով, ուռուցիկ իրանով և դուրս թեքված շուրթի պսակով դարչնագույն փայլեցված, անզարդ և կտրելու եղանակով արված զիգզագաձև հորիզո-

---

[24] Э. М. Г о г а д з е. *Նշվ. աշխ., աղ. 17:*

[25] В. Э. О г а н е с я н. *Նշվ. աշխ., էջ 26–35, աղ. XXVI:*

[26] *Նույն տեղում, էջ 26–35:*

[27] *Նույն տեղում, էջ 26–35, աղ. XXV:*

[28] *Պ. Ս. Ա վ ե տ ի ս յ ա ն, Ն. Ե ն գ ի բ ա ր յ ա ն, Գ. Ս ա ր գ ս յ ա ն. Հայաստանի նորահայտ հնագիտական հուշարձաններ (Արտաշավանի դամբանադաշտը).– Հանդես ամսօրյա, 1998, թիվ 1–12, էջ 194–247, աղ. Բ:*

[29] Э. М. Г о г а д з е. *Նշվ. աշխ., աղ. 20, 28:*

Աղյուսակ IV



նական ալիքներով կետաշարով ու այլ ձևերով զարդարված կճուճներ են (աղ. II, նկ. 6,7,8, աղ. VI, նկ. 2): Վերջիններիս մյուս տեսակները ներկայանում են մեկական օրինակով. մեկն ունի ուղղահայաց կլոր (աղ. III, նկ. 8), մյուսը՝ դեպի ներս թեքված կլոր շուրթ (աղ. III, նկ. 10), երրորդն ունի դեպի դուրս թեքված և թեք կտրված շուրթ, որի ուսերն ունեն հարթակի տեսք (աղ. III, նկ. 11): Հիշյալ բոլոր տեսակի անոթներն իրենց ձևով և զարդաձևերով ու կատարման եղանակներով ամբողջությամբ համապատասխանում են Ուզերլիկ թեփեի ստորին շերտի նյութերին[30]*: Առանց զարդերի նման նյութերով է առանձնանում Ք. ա. XXII–XXI դդ. թվագրված Արտաշավանի թիվ 5 դամբարանը*[31]*:*

Թաղման հրապարակների կառուցվածքով և նյութերով Լճաշենի 120 ու Քարաշամբի դամբանաբլուրների հետ զգալի ընդհանրություններ ունեն Հյուսիսարևմտյան Ադրբեջանի Շեքիի Կուդուրլու վայրում բացված 14 դամբանաբլուրները, միայն այն տարբերությամբ, որ վերջիններիս թաղման հրապարակների շուրջը պատրաստված են ճառագայթաձև հարթակներ, և թաղումները կատարված են մեջքի վրա պառկած դիրքով[32]*: Մեծ կճուճներից բացի՝ այստեղ հայտնաբերվել են նաև ուսումնասիրվող կճուճների փոքր տեսակները, որոնց մի մասը, ի տարբերություն Հայաստանի օրինակների, ունի մեկ կամ երկու կանթ*[33]*:*

Ըստ Տ. Ախունդովի՝ սկզբնական շրջանում՝ Ք. ա. III հազ. II կեսին, Ադրբեջանի վերոհիշյալ տարածաշրջանի վրա մեծ է եղել Հյուսիսային Կովկասի ազդեցությունը, որը հետագայում հետզհետե փոխվում է հարավկովկասյանով[34]*: Որքանով է ճշմարտացի այս հետևությունը, միանշանակ պնդելը դժվար է: Եղած տվյալները ցույց են տալիս, որ հյուսիսկովկասյան վաղ բրոնզի վերջով թվագրվող այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են Վելիքենդի և Սիգիրմինի բնակատեղիները, հայտնաբերված նյութերի զգալի մասը ձևերով և հարդարանքով ընդհանրություններ ունի Հայաստանից հայտնի նյութերի հետ*[35]*:*

Մի փոքր այլ է վիճակը հյուսիսկովկասյան մեկ այլ հուշարձանում՝ Գինչիում: Այստեղ նյութերի ուսումնասիրվող տեսակների հետ հանդես են գալիս վաղ բրոնզի «մեռնող» հատկանիշներով նյութեր, որպիսիք բացակայում են մեր գտածոներում: Այդ առումով կարևորում ենք Լճաշենի թիվ 120 (վերին թաղում) և 123 դամբանաբլուրներում հայտնաբերված փոքր ծավալի խեցանոթների ու հատկապես զարդերի որոշ ձևերի և կատարման եղանակների (կտրելու) զգալի ընդհանրությունները: Ուշագրավ են Գինչիում պեղված 15 դամբանային գտածոների տվյալները: Այստեղ հայտնաբերված փոքր ծավալի խեցանոթների տարբերությունը Լճաշենի

---

[30] К. Х. К у ш н а р л в а. *Նշվ. աշխ., էջ 87–89, նկ. 17–19:*

[31] *Պ. Ս. Ա վ ե տ ի ս յ ա ն և ուրիշներ. նշվ. աշխ., աղ. Բ:*

[32] Т. А х у н д о в. *Նշվ. աշխ., էջ 290–252:*

[33] *Նույն տեղում, նկ. XXXIV:*

[34] *Նույն տեղում, էջ 237–238:*

[35] М. Г. Г а д ж и е в. Раннеземледельческая культура Северо-Восточного Кавказа эпохи ранней бронзы. М., 1991, с. 134, 148, рис. 25, 36.

Աղյուսակ V



նյութերից այն է, որ դաղստանյան օրինակները բռնակներ ունեն[36]: Բացի այդ՝ թիվ 13 դամբանախցում հայտնաբերված նույն տեսակի անոթների հետ հայտնաբերվել է նաև Թռեղքի վաղ խմբին պատկանող փքուն իրանով երկկանթ անոթների ձև ունեցող կճուճ, որը, կարծում ենք, ևս մեկ անգամ հավաստում է վերջիններիս մերձավոր լինելու փաստը:

Ուսումնասիրվող խեցանոթների տեսակներից բացի՝ Լճաշենի թիվ 14 դամբանաբլրում գտնվել են երկու «աղաման» (աղ. V, նկ. 6, 8), իսկ թիվ 44-ում՝ քարից կերտված կափարիչ (աղ. V, նկ. 1): Չծավալվելով արձանագրենք, որ նշված խեցանոթները և կափարիչը հատկապես Թռեղք-վանաձորյան շրջափուլի հատկանշական նյութեր են, որոնք հաճախ են հանդիպում տվյալ ժամանակաշրջանին պատկանող գտածոներում: Թիվ 123 դամբարանում, բացի ներկայացված խեցեղենից, ինչպես հավաստում է պեղող հնագետը, բացված եզան կմախքի ոսկորների միջից գտնվել է վանակատից պատրաստված, պոչուկով զանգվածեղ նետի ծայր (աղ. II, նկ. 9): Իսկ կենդանու ոտքերի ոսկորների և մարդու կմախքի արանքում դրված է եղել հարթ շեղբով և պոչուկով բրոնզե դաշույն, որի կոթառի վրա ուղղահայաց դիրքով երկու անցք է արված (աղ. II, նկ. 1):

Խնդրո առարկա դաշույնների տեսակը, ձևավորվելով Կուր-արաքսյան մշակութային ոլորտում, որոշ փոփոխություններ կրելով շարունակում է կիրառվել բրոնզի դարաշրջանի հաջորդ փուլերում: Ի տարբերություն Կուր-արաքսյան փուլի՝ միջին բրոնզի ժամանակաշրջանի դաշույնները որպես կանոն կոթառի վրա ունեն մեկ կամ երկու անցք, շեղբերը կտրվածքում երբեմն ստանում են քիչ ուռուցիկ (օվալ) տեսք, որոնց մակերեսի կենտրոնում կամ եզրերին արված են ուղղահայաց ջիղեր: Լճաշենի ճշգրիտ զուգահեռներ կարող են համարվել Սիսիանի փորձակայանի թիվ 2, 10 և 3 դամբանային գտածոները, որոնցից վերջինն ունի երեք անցք՝ մեկական ուսերին և պոչուկին[37]: Այս դաշույնները գտնվում են հենց այն նյութերում, որպիսիք ամբողջությամբ համադրվել են Լճաշենի դաշույնի հավաքածուի գտածոների հետ: Հայաստանի միջին բրոնզի հաջորդ փուլերին պատկանող հուշարձաններում ևս այդպիսիք մնում են կիրառության մեջ ու հայտնի են Վանաձորի (Կիրովականի) դամբանաբլրից, Էջմիածնից և Կարմիր վանքից[38]: Արևելյան Վրաստանում նմանօրինակ դաշույններ են հայտնի վաղ կուրգանային շրջափուլի այնպիսի նյութերում, ինչպիսիք են Ցնորիի խմբի թիվ 1 դամբանաբլուրը[39] և Բեդենի դամբարաններից մեկը[40], որոնք վերաբերում են Ք. ա. III հազ. II կեսին: Այս փուլին է աղերսվում նաև Թռեղքի թիվ 40 դամբանաբլուրը, որտեղ նույն ձևի դաշույն կա[41]: Նմանատիպ են Ախչիայի թիվ 1 և 7, Դումիելայի թիվ 1 դամբանաբ-

---

[36] М. Г. Гаджиев. Из истории культуры Дагестана в эпоху бронзы. Махачкала, 1969, рис. 3, 10, 12, 23, 25.

[37] O. S. Xnkikyan. *Նշվ. աշխ., նկ. IX(1), XI/1, XII/1.*

[38] А. А. Мартиросян. *Նշվ. աշխ., էջ 65, 69, նկ. 30, 34, 20ա:*

[39] Ш. Ш. Дедабрешвили. Курганы Алазанской долины…, табл. VII, рис. 4.

[40] Г. Гогеджешвили. Бедени-Культура курганных погребений. Тбилиси, 1981, с. 136.

[41] Э. М. Гогадзе. *Նշվ. աշխ., աղ. 12/3:*

լուրների դաշույնները[42]*, որոնք իրենց նյութերով համապատասխանում են Ք. ա. XXII դ. II–XIX դ. I կեսով թվագրվող Լճաշենի նմուշներին:*

Այսպիսով, վաղ բրոնզի հուշարձաններում հայտնաբերված առանց կոթառի անցքի օրինակներից բացի, մյուսների կոթառին կամ ուսերին անցքեր կան, որոնք փոքր-ինչ տարբերվում են նաև շեղբերի որոշ առանձնահատկություններով, այն է՝ միջին բրոնզի նմուշների միջնամասում գոյություն ունեն ուղղահայաց ջիղեր:

Ինչ վերաբերում է Լճաշենի թիվ 123 դամբարանի վանակատից նետասլաքին, ապա այն, հավանաբար, ծառայել է նաև որպես տեգի ծայր: Իսկ դրանց փոքր տեսակները հայտնի են վաղ բրոնզի այնպիսի հուշարձաններից, ինչպիսիք են Մաշտոցի բլուրը[43]*, Քեթին*[44]*, Գառնին*[45] *և Թեթրաձմինդան*[46]:

Դառնալով Լճաշենի թիվ 120 դամբարանի վերին թաղման նյութերին՝ նշենք, որ բացի վերն ուսումնասիրված խեցանոթներից, հայտնաբերվել են նաև բրոնզից, շաղախից ու քարից պատրաստված զարդարանքի առարկաներ (աղ. III, նկ.1-7), որոնցից երեքը (աղ. III, նկ. 1, 2, 4) բրոնզե մատանիներ են, մեկը (աղ. III, նկ. 7)՝ ապարանջան: Ինչպես վերը նշված թիվ 123 դամբանաբլրի դաշույնի ձևը, այնպես էլ երկգալար բրոնզե զարդերը երևան են գալիս Կուր-արաքսյան մշակույթում, որպիսիք հայտնի են Էլառի թիվ 11 դամբարանից[47]*, Արագածից (պեղումները՝ Ռ. Թորոսյանի, չհրատարակված նյութեր), Կվացխելեբիի C շերտից*[48] *և այլ հնավայրերից: Ի դեպ, այս զարդատեսակը Հարավային Կովկասի միջին բրոնզի հուշարձաններում, Լճաշենից բացի, մեզ հայտնի չէ: Դրանք հայտնի են լեռնային Դաղստանի՝ Գինչիի Ք. ա. II հազ. I քառորդով թվագրված երեք՝ թիվ 5, 7 և 9 դամբարաններից*[49]*: Ինչ վերաբերում է քարից պատրաստված ուլունքին և կախիկին (աղ. II, նկ. 3, 5), ապա դրանք ևս առավել լավ հայտնի են Դաղստանի հիշյալ և 1, 2 ու մի շարք այլ դամբանային գտածոներում: Այդօրինակ զարդեր գտնվել են նաև թռեղքյան մշակույթին պատկանող այնպիսի հուշարձաններում, ինչպիսիք են Ախչիայի թիվ 9 և Կոժրեբիի թիվ 2*[50] *դամբանաբլուրները: Լճաշենի ուսումնասիրվող թիվ 120 դամբա-*

---

[42] О. М. Джапаридзе, Я. Киквидзе, Г. Авалишвили, А. Церетели. Результаты Месхет-Джавахетской археологической экспедиции (1970–1977 гг.). Тбилиси, 1981, табл. II, рис. 15,16, табл. XXII, LXIII.

[43] *Ս. Հ. Սարդարյան. նշվ. աշխ., էջ 146, նկ. 4:*

[44] Л. А. Петросян. Раскопки памятников Кети и Воскеаска..., табл. 6, рис. 1–3.

[45] *Է. Վ. Խանզադյան. Գառնի IV, Երևան, 1969, էջ 27, նկ. 17:*

[46] Р. М. Мунчаев. Кавказ на заре бронзового века. М., 1975, с. 133, рис. 14/1-6.

[47] *Է. Վ. Խանզադյան. Էլառ-Դարանի, Երևան, 1979, աղ. VIII:*

[48] А. И. Джавахишвили, Л. И. Глонти. Урбниси I, 1962, табл. 36

[49] М. Г. Гаджиев. Из истории культуры Дагестана..., 1969, с. 47–74, рис. 20, 22, 27, 31.

[50] О. М. Джапаридзе. Результаты Месхет-Джавахетской археологической экспедиции.., с. 53, рис. 18, с. 95, рис. 39.

Աղյուսակ VI



բանում գտնվել է նաև երկարուկ, եռաթև ուլունք (աղ. III, նկ. 6), որի նմանակ կարող է համարվել Լիլոյի թիվ 1 դամբանաբլրի նմուշը[51]:

Այսպիսով, Լճաշենի թիվ 14, 42, 44, 120 և 123 դամբարանների ուսումնասիրությունը վկայում է, որ դրանք պատկանում են Թռեղք-վանաձորյան հնագիտական մշակույթի վաղ փուլին և թվագրվում են Ք. ա. XXII դ. II–XIX դ. առաջին կեսերով:

Առանձնակի հետաքրքրություն է ներկայացնում 1960 թ. Հ. Մնացականյանի պեղած թիվ 62 դամբարանից հայտնաբերված միակ նմուշը (աղ. IV, նկ. 1): Զեռածեփ մուգ դարչնագույն արտաքին մակերեսով, թույլ դուրս ճկված շրթով, պարանոցից իրանին սահուն անցումով խեցանոթի ուսերը զարդարված են կտրելու եղանակով արված կարճ գծիկներով լցված երկու զույգ կախված կիսաշրջաններով: Անոթն իր ձևով ու հարդարանքով մերձենում է ինչպես Վանաձորից հայտնաբերված վաղ բրոնզի իրին[52], *այնպես էլ Շենգավիթի վերին շերտերին բնորոշ նյութերին*[53] *և վերջիններից տարբերվում է միայն զարդաձևով: Լճաշենի օրինակը ձևով զգալի ընդհանրություններ ունի նաև Արուճի թիվ 1 դամբանաբլրից հայտնի միականթ անոթի հետ (ՀՊՊԹ, 2777/16):*

Այսպիսով, մինչ օրս Լճաշենում պեղված դամբարանների քանակը հիմք է տալիս հանգելու այն հետևության, որ Լճաշենը վաղ բրոնզի և Թռեղք-վանաձորյան ժամանակահատվածում բնակեցված է եղել խիստ նոսր: Բնակչության թիվը հետզհետե աճում է Կարմիրբերդյան մշակութային փուլից՝ Ք. ա. XVIII դ. սկսած և իր բարձրակետին է հասնում ուշ բրոնզի դարաշրջանում:

Հարկ է այստեղ հիշել, որ մինչ օրս Լճաշենում պեղված դամբանային գտածոների շարքում Թռեղք-վանաձորյան մշակույթի վերջին փուլը դրսևորող դամբարաններ չկան: Այստեղ իր տեղն ունի 1993 թ. Լճաշենի դամբանադաշտի շարունակությունը՝ Սևան քաղաքի գործադիր կոմիտեի (քաղաքապետարան) բակում մեր բացած մասնակիորեն խաթարված դամբարանը: Այն 4,00 x 2,00 x 2,00 մ չափերի հիմնահողային, բոլորշի անկյուններով, արևելք-արևմուտք, քիչ դեպի հարավ շեղված դամբանախուց է: Խցի հյուսիսարևելյան պատի մեջ՝ հատակից 1 մ բարձր, մխրճված բրոնզե նիզակի ծայր կար: Դամբանախցի ամբողջ հատակին կարմիր անգոբով պատած գունազարդ խեցանոթների բեկորներ էին սփռված, որտեղ հիմնականում առանձնանում են երկու տեսակի խեցանոթներ՝ կարասներն ու քրեղանները (աղ. VI, նկ. 6-8): Լճաշենի նախորդ փուլի թիվ 123 դամբարանի և Սևանի դամբանային համալիրների կարասները ձևով՝ ձգվածությամբ միմյանց շատ մոտ են, այն տարբերությամբ, որ Սևանի օրինակների իրաններն անգոբապատ են և ունեն ավելի ձգված տեսք: Սակայն դրանք միմյանցից հստակ զանազանվում են զարդամոտիվների կատարման եղանակով (սև ներկով) ու ձևերով: Գերակշռում են սև ներկով արված ջրի սիմվոլիկ և ջրում լողացող թռչունների պատկերները, ալիքագոտիները,

---

[51] Э. М. Г о г а д з е. Курганные погребения Лило.– Вестник гос. музея Грузии, XXXII – В. Тбилиси, 1976, табл. XXV /10.

[52] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Գառնի IV, էջ 87, նկ. 81:*

[53] *Ս. Հ. Ս ա ր դ ա ր յ ա ն. նշվ. աշխ., էջ 82–83, աղ. LVI, նկ. 2, 3, 5, 6:*

զիգզագները (աղ. VI, նկ. 7): Քրեղանների (աղ. VI, նկ. 6) զարդերը հիմնականում կատարված են շուրթերից կախված կիսաշրջանների տեսքով: Էլառի թիվ 35 դամբարանի հիդրիան և քրեղաններն իրենց ձևերով ամբողջությամբ համապատասխանում են Սևանի օրինակներին[54], միայն այն տարբերությամբ, որ քրեղանները զուրկ են զարդերից: Ամբողջությամբ մեր օրինակներին է համապատասխանում նաև Էլառի թիվ 42 դամբարանի հիդրիան[55]:

Պեղող հնագետը, ամփոփելով թիվ 35 և 42 դամբարանների ուսումնասիրությունը, իրավացիորեն եզրակացնում է, որ թիվ 35 դամբարանի խեցեղենը կարծես կապող օղակ լինի Կիրովական-Ծաղկա խմբի և միջին բրոնզից ուշ բրոնզի անցման փուլի Նորատուսի ու Նուլիի խմբի միջև և կարող է թվագրվել Ք. ա. XV դարի II կեսով[56]: Է. Խանզադյանը, ճիշտ նշմարելով տվյալ նյութերի անցումային բնույթը, միևնույն ժամանակ ժամանակագրության առումով մնացել է գոյություն ունեցող կաղապարների սահմանում, ըստ որի՝ Թռեղք-վանաձորյան մշակույթի վերջին փուլն ավարտվում է Ք. ա. XV դարում:

Թռեղք-վանաձորյան մշակույթի ավարտական ժամանակաշրջանին է պատկանում Հառիճի թիվ 11 դամբարանը: Այստեղ հայտնաբերված անզարդ նյութերն անհիմն մոտեցնելով ուշ բրոնզի նմուշներին՝ Տ. Խաչատրյանը թվագրում է Ք. ա. XVI–XV դարերով[57]:

Սևանի նյութերի վաղ դրսևորումներն առկա են նաև 1982 թ. Ավազաբլուրում պեղված դամբարանում (ՀՊՊԹ, 2817/1-16): Հար և նման գույքակազմ ունի և Ղրղիի դամբարանը: Ուսումնասիրողը տվյալ դամբարանի նյութերը վերագրելով Թռեղք-վանաձորյան մշակույթի III փուլին՝ թվագրում է Ք. ա. XVIII–XVI դարերով[58]:

Ըստ Է. Գոգաձեի դասակարգման սանդղակի՝ Սևանի հիդրիաները զուգահեռներ ունեն Թռեղքի III փուլին պատկանող թիվ 1, 7 և 15 դամբանաբլուրներում, որոնք վերջինիս կողմից թվագրված են Ք. ա. XVI–XV դարերով[59]:

Սևանի դամբարանի խեցանոթները կրկնում են նաև Մեսխեթ-Ջավախեթի թիվ 3 դամբարանի նյութերը[60]: Գոյություն ունի հուշարձանների ևս մի խումբ, որը հստակ հատկանիշներով աղերսվում է արդեն հաջորդ՝ Կարմիր բերդ-սևանարցախյան մշակութային դրսևորումների հետ: Նման դրսևորումներ կան Էլառի թիվ 25 դամբարանում, որտեղ Ուզերլիկ թեփեի ստորին շերտի կամարաձև զարդերը զուգորդված են Սևան-Արցախի գունազարդ խեցեղենի նմուշների հետ[61]: Ուսումնասիրողը, իրավամբ, խորա-

---

[54] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Էլառ-Դարանի, նկ. 101:*

[55] *Նույն տեղում:*

[56] *Նույն տեղում, էջ 75:*

[57] Т. С. Х а ч а т р я н. Древняя культура Ширака. Ереван, 1975, с. 119, рис. 72.

[58] С. А. Е с а я н. Древняя культура Северо-Восточной Армении (III–I тыс. до н. э.). Ереван, 1976, с. 102.

[59] Э. М. Г о г а д з е. Периодизация и генезис…, табл. 15, 19, 22.

[60] О. М. Д ж а п а р и д з е, Я. К и к в и д з е, Г. А в а л и ш в и л и, А. Ц е р е т е л и. *Նշվ. աշխ., էջ 58, նկ. 11:*

[61] *Է. Վ. Խ ա ն զ ա դ յ ա ն. Էլառ-Դարանի, էջ 64–65:*

քանդակ զարդերով խեցեղենը համարում է Ք. ա. II հազարամյակի սկզբի նյութեր, իսկ սանրատամ գունեղ շերտոններով նյութերը հանդիպում են և՛ վաղ, և՛ ուշ փուլերում: Եթե համատեղում ենք այդ երկու հատկանիշները, ապա ճշմարտացի պիտի համարել այն հետևությունը, որ դրանք արգասիք են մշակութային համատեղության և պետք է թվագրել Ք.ա. XIX–XVIII/XVII[62]: Այս խմբին է դասվում նաև Լոռի բերդի թիվ 6 դամբանաբլուրը, որտեղ համատեղվում են դասական Թռեղքի և Սևան-Արցախի կետազարդ նյութերը[63]: Հար և նման գունազարդ կետազարդ և խորաքանդակ նյութեր են հայտնի Ախլաթյանում[64]: Ուշագրավ են Սիսիան I համանման խառը նյութեր պարունակող թիվ 1-4 դամբարանների ուսումնասիրման ժամանակ արված ճշմարտացի մոտեցումները նյութերի դասակարգման և ժամանակագրության խնդրում: Հեղինակները խառը կազմ ունեցող գտածոները համարում են Ք. ա. XVIII–XVII դարերի մշակութային արգասիք[65]:

Խեցեղենից բացի՝ Սևանի դամբարանում գտնվել է նաև բրոնզե միակ զենքը՝ նիզակի ծայրը (աղ. VI, նկ. 9): Հայաստանի տարածքում այս զինատեսակն առաջին անգամ հայտնաբերվել է Կիրովականի դամբանաբլրից, որը կրկնում է Թռեղքի դամբանաբլուրներից մեկում գտնվածը[66]: Հ. Մարտիրոսյանը, քննության առնելով այդ նյութերն համաժամանակյա այլ նյութերի համատեքստում, դրանք համարում է Ք. ա. II հազարամյակի կեսերի արտադրանք[67]: Բ. Կուֆտինը Թռեղքի թիվ 15 դամբանաբլրի նույն ձևի նիզակի ծայրը և ամբողջ հավաքածուն դասում է Թռեղքի վաղ խմբին[68], իսկ Է. Գոգաձեն միանգամայն հակառակ՝ վերջին խմբում, և միքենյան ուշ սիրիական նյութերի հիման վրա թվագրում Ք. ա. XVI–XV դարերով, որի վերին սահմանը, ըստ նրա, համընկնում է ՈՒԲ սկզբնական փուլի հետ (Ք. ա. XV դարի վերջ – XIV դարեր)՝ չբացառելով անցման փուլի առկայությունը[69]:

Օ. Ջափարիձեն 1970-ական թվականներին Թռեղքի մշակույթի տարածման սահմանները որոշելու նպատակով Մեսխեթ-Ջավախքում կատարած պեղումներով բացված դամբանաբլուրները համարում է Թռեղքի մշակույթի ուշ փուլի նյութեր, այդ թվում և Ախչիայի թիվ 3 դամբանաբլուրը, որի

---

[62] *Պ. Ս. Ավետիսյան. Հայաստանի միջին բրոնզի ժամանակագրությունը և փուլաբաժանումը.– Պատմ. գիտ. թեկնածուական ատենախոսության սեղմագիր, Երևան, 2003, էջ 19:*

[63] С. Г. Деведжян. Лори Берд I. Ереван, 1981, табл. II–IV.

[64] O. S. Xnkikyan. *Նշվ. աշխ., նկ. XVII:*

[65] P. Avetisyan, R. Badalyan, A. Gevorkyan, O. Khnkikyan. The 1998 Excavation Campaign at the, Middle Bronze Age Necropolis of Sisian, Armenia, Studi ed micenei ed Egeo-Anatolici 42/2. Roma, pp. 161–173, 1998.

[66] Б. Б. Пиотровский. Археология Закавказья (с древнейших времен до I тысечелетия до н. э.). Л., 1949, с. 47.

[67] А. А. Мартиросян. *Նշվ. աշխ., էջ 67:*

[68] Б. А. Куфтин. *Նշվ. աշխ., էջ 85–86:*

[69] Э. М. Гогадзе. Периодизация и генезис..., 1972, с. 106–107.

մեջ գտնվել է ներկայացվող նիզակի ծայրի նմանակը, և այն թվագրել է Ք. ա. XVII–XVI դարերով[70]:

Մի փոքր ավելի ուշ Վ. Սադրաձեն, դասակարգելով Մեսխեթի միջին բրոնզի դարաշրջանի նյութերը, թիվ 28 դամբարանը, որի մեջ ևս գտնվել է նման նիզակի ծայր, այն թվագրել է Ք. ա. 1800–1600 թվականներով և համարել ՄԲ միջին փուլ[71]:

Նիզակի վաղնջական օրինակը Հայաստանում մինչ օրս հայտնի է Սիսիանի թիվ 10 դամբարանից: Ուսումնասիրողն այն թվագրում է Ք. ա. III հազարամյակի վերջ–II հազարամյակի սկզբով[72]: *Պ. Ավետիսյանն այս դամբանային գտածոները և Հայաստանի այլ նմանատիպ նյութերն ամբողջությամբ վերագրել է Ք. ա. XXII դարի II կես – XIX դարի առաջին կեսին*[73]:

Սևանի դամբարանի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ այդ գունազարդ խեցեղեն պարունակող թաղման գույքը դուրս չի գալիս Ք. ա. XIX/XVIII դարերի սահմաններից, և որ տվյալ դամբարանի նիզակի ծայրի տեսակը ձևավորվել է դեռևս Ք. ա. XXII դարի II կես – XIX դարի սկզբներում:

Հանրագումարի բերելով Լճաշենի դամբանադաշտում պեղումներով հայտնաբերված սակավաթիվ՝ վաղ կուրգանային թիվ 55 և Թռեղք-վանաձորյան թիվ 120 (վերին թաղում), 123, 14, 42, 44, 62 և Սևան քաղաքում պատահականորեն բացված դամբարանների ուսումնասիրությունը՝ հանգել ենք այն հետևության, որ տվյալ մշակութային փուլի զարգացումը տեղի է ունեցել ոչ մեկուսի և ընդհանրական է հարավկովկասյան տարածաշրջանին: Սրանով ամբողջացվում է Լճաշենի մշակույթի զարգացման ընթացքը:

КУЛЬТУРА ЛЧАШЕНСКОГО НЕКРОПОЛЯЎ
(XXIV–XVIII вв. до Р. Х)

ЛЕВОН ПЕТРОСЯЎН

Р е з ю м е

Культура Лчашена датируется XXIV–XVIII вв. до Р. Х. К этой культуре относятся раскопанные А. Мнацаканяном в 1960-е гг. курганы ¹14, 42, 44, 120 (верхнее погребение), 123 и погребение ¹ 62, а также раскопанное нами в 1988 г. погребение ¹ 55, в том числе захоронения на территории города Севан, раскопанные в 1993 г. Погребение ¹ 55, как по своей конструкции, так и по

[70] О. М. Д ж а п а р и д з е. Результаты Месхет-Джавахетской археологической экспедиции..., с. 172.

[71] В. С а д р а д з е. Археологические памятники «Мцхет великой» эпохи средней бронзы. Тбилиси, 1993, табл. XXIX, XLIII.

[72] O. S. X n k i k y a n. *Նշվ. աշխ., նկ. IX:*

[73] *Պ. Ս. Ա վ ե տ ի ս յ ա ն. նշվ. աշխ., էջ 19:*

инвентарю, принадлежит к раннекурганной культуре. Упомянутые курганы, раскопанные А. Мнацаканяном, принадлежат к трехк-ванадзорской культуре и датируются XXII–XIX вв. до Р. Х., а погребение в городе Севан относится к последнему этапу трехк-ванадзорской культуры – XIX в.–первой половине XVIII в. до Р. Х.

THE CULTURE OF LCHASHEN CEMETERY
(The 24th–18th centuries B.C.)

LEVON PETROSYAN

S u m m a r y

The culture of Lchashen cemetery is dated to the 24th–18th centuries B.C. To this culture belong the Lchashen barrows №14, 42, 44, 120 (upper burial), 123 and burial № 62 excavated by H. Mnatsakanyan in the 1960s, as well as the burial №55 excavated in 1988, and the tombs in the town of Sevan excavated by us in 1993. The burial №55, both with its construction and materials found within it belongs to Early Kurgan Culture. The above mentioned barrows excavated by H. Mnatsakanyan belong to Trialeti-Vanadzor culture and date to the 22nd–19th centuries B.C., and the Sevan town burial dates to the last stage of Trialeti-Vanadzor culture, i.e. the 19th – the first half of the 18th centuries B.C.